# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2011 թվականի N 1593-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը` համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ հանրապետական գործադիր մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության յուրաքանչյուր տարվա գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակման ժամանակ միգրացիոն քաղաքականության մասով հիմք են ընդունում Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրով տվյալ հանրապետական գործադիր մարմնի համար սահմանված համապատասխան տարվա միջոցառումները:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին` սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի միջոցառումների իրականացման ֆինանսավորման հնարավորության հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացների շրջանակներում` Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական կառավարման մարմինների կողմից` սահմանված կարգով ներկայացված հայտերի առկայության դեպքում:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի իրականացման ընթացքը դիտարկելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմանը համապատասխան` ստեղծել Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ` միջգերատեսչական հանձնաժողով) և հաստատել միջգերատեսչական հանձնաժողովի կազմը` համաձայն N 2 հավելվածի:

5. Միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ընդգրկված հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին` 15-օրյա ժամկետում միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին ներկայացնել թեկնածուների` միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկելու նպատակով:

6. Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին` մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի հաստատմանը ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը և անհատական կազմը:

7. Սահմանել, որ միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության ապահովման կազմակերպատեխնիկական սպասարկումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

8. Սույն որոշմամբ հաստատված ծրագրի պատասխանատու կատարող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին` սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա պարբերականությամբ` միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնել իրենց կողմից իրականացված միջոցառումների կատարման մասին հաշվետվություն:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետին` յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Տ. Սարգսյան**

2011 թ. նոյեմբերի 16
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի (այսուհետ՝ գործողությունների ծրագիր) նպատակը ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի N 51 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգով (այսուհետ՝ հայեցակարգ) սահմանված միգրացիոն քաղաքականության հիմնորոշ կամ գերակա ուղղությունների իրականացումն ապահովելն է:

ՀՀ միգրացիայի ոլորտի պետական կարգավորման համակարգը (այսուհետ՝ միգրացիոն համակարգ) 1988-2011 թթ. ընթացքում կրել է էական փոփոխություններ, ինչպես քաղաքական, օրենսդրական և հայեցակարգային, այնպես էլ՝ ինստիտուցիոնալ և օպերատիվ կառավարման մակարդակներում՝ ունենալով որոշակի զարգացումներ: Այնուամենայնիվ, միգրացիոն համակարգի առջև ներկայումս էլ ծառացած են հրատապ և արմատական լուծումներ պահանջող մի շարք մարտահրավերներ ու հիմնախնդիրներ, որոնց մի մասն անցած քսան տարիների ՀՀ միգրացիոն իրավիճակից բխող հիմնախնդիրներ են, որոնք, ՀՀ միգրացիայի պետական կարգավորման նախընթաց փուլերում լուծումներ չստանալով, փոխանցվել են ներկա փուլ: Հիմնախնդիրների մյուս մասը գլխավորապես առաջացել է վերջին մի քանի տարիներին՝ գլոբալացման և միջազգային ներգրավողական (ինտեգրացիոն) գործընթացների, տնտեսական և աշխարհաքաղաքական նոր իրողությունների ազդեցությամբ, որոնց հրատապությունն ավելի ընդգծվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ:

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման հիմնական քաղաքական ուղենիշներն ու թիրախները սահմանվել են ՀՀ կառավարության 2008 թ. ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ գլխում («Կառավարության գործունեության հիմնական գերակայությունները»), որում «արտագաղթի կասեցումն ու ներգաղթի խրախուսումը» ճանաչվել է հիմնական գերակայություններից մեկը: ՀՀ կառավարությունը նախանշել է միգրացիայի կարգավորման հիմնական ուղղությունները. 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականների՝ հասարակությանն ինտեգրման գործընթացի շարունականության, բնակչության տեղաշարժերի ուղղությունների և ծավալների հաշվառման միասնական համակարգի ստեղծման, միջազգային աշխատաշուկային Հայաստանի Հանրապետության քաղաքակիրթ ինտեգրման, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մարդասիրական նկատառումներով ՀՀ-ի կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի միջազգային չափանիշներին համապատասխանեցման, օտարերկրյա քաղաքացիների մուտքի, Հայաստանում նրանց կացության կարգավիճակների տրամադրման, հաշվառման ու նրանց աշխատանքային գործունեությունը կանոնակարգող կառուցակարգերի մշակման, սահմանային հսկողության համակարգի կատարելագործման, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի համակարգի և Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման ՀՀ կառավարության նշված ծրագրի 4-րդ գլխի («Կառավարության գործունեության հիմնական գերակայությունները») միջոցով:

Միգրացիայի կարգավորման անհրաժեշտությունը ճանաչվել է նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը գերակա խնդիրներից մեկը: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն ամրագրել է, որ «ՀՀ ազգային անվտանգության ներքին սպառնալիք է չկառավարվող և անօրինական արտագաղթը»: Այդ տեսանկյունից «միգրացիայի կարգավորման պետական քաղաքականությունը միտված է լինելու ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, «ուղեղների արտահոսքի» կանխմանը:

2. ՀՀ կառավարությունը պարտավորվել է նաև հետևողականորեն հետամուտ լինել ՄԱԿ-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում միգրանտների, փախստականների և հարկադիր վերաբնակիչների խնդիրներին, նրանց սոցիալական պաշտպանության հարցերի շուրջ համագործակցությանը վերաբերող կոնվենցիաների ու համաձայնագրերի պահանջների կատարմանը: ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրից բխող պարտավորությունների շրջանակում հասնել ԵՄ-ի և Հայաստանի միջև մարդկանց տեղաշարժի հեշտացմանը, ապաստանի և փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրությունը ոլորտը կարգավորող միջազգային իրավունքի փաստաթղթերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելուն:

3. Միգրացիայի ոլորտում ՀՀ կառավարության քաղաքական կամքի ու միջազգային պարտավորությունների իրականացման գրավականը ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի N 51 արձանագրային որոշմամբ ՀՀ միգրացիայի պետական քաղաքականության կարգավորման հայեցակարգի հաստատումն էր: Հայեցակարգով սահմանված են միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության 14 հիմնախնդիրներ:

Նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները միտված են ապահովելու միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի համապատասխանությունը ԵՄ-ի օրենսդրությանն ու լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքներին, միգրացիոն մոնիթորինգի, իրավիճակի վերլուծման և գնահատման համակարգի ներդրումը, արտագնա աշխատանքի մեկնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը, 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած փախստականների՝ հասարակությանն ինտեգրման շարունակականությունը, աջակցելու օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերադարձին և հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը, կանխարգելելու Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիան, բարձրացնելու անձի ինքնությունը հավաստող փաստաթղթերի պաշտպանվածության մակարդակը, դյուրացնելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տեղաշարժվելու իրավունքը, կանոնակարգելու Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների զբաղվածության պայմանները, արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության հնարավոր զանգվածային տեղաշարժերը, կատարելագործելու Հայաստանի Հանրապետության սահմանային կառավարման ու ապաստանի տրամադրման համակարգերը, արդյունավետ կազմակերպելու մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանությունը, ուղղորդելու ներքին միգրացիան Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության

և երկրի կայուն զարգացման պահանջներին համապատասխան:

4. Դրանց լուծմանն է ուղղված ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների սույն ծրագիրը, որը մշակված է հետևյալ տրամաբանությամբ`

1) հիմնորոշ կամ գերակա ուղղություններից յուրաքանչյուրը հայեցակարգում նշված հերթական համարի տակ ներկայացված է որպես միգրացիոն քաղաքականության միջոցառումների առանձին խումբ, որը բաժանված է մի քանի ենթաուղղությունների կամ ընդհանուր բնույթի միջոցառումների, որոնք ներկայացված են աղյուսակի ամենաձախ սյունակում (օրինակ` 5-րդ համարի տակ որպես միջոցառումների առանձին խումբ սահմանված է հետևյալ հիմնորոշ կամ գերակա ուղղությունը` «Արտագնա աշխատանքի մեկնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն», որն իր հերթին բաժանված է 6 ենթաուղղությունների կամ միջոցառումների` 5.1.-5.6 համարակալմամբ).

2) յուրաքանչյուր ենթաուղղության դիմաց, հաջորդ` 2-րդ սյունակում ներկայացված են տվյալ ենթաուղղությունից կամ միջոցառումից ակնկալվող արդյունքները (օրինակ` 5.1-ին համարի տակ նշված ենթաուղղության` «Արտագնա աշխատանքների մեկնման գործընթացներում ծագող իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորում` նպատակ ունենալով պաշտպանել ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու շահերը» դիմաց` հաջորդ սյունակում ամրագրված են այդ միջոցառումից ակնկալվող երկու վերջնարդյունք, մասնավորապես, «1. Արտագնա աշխատանքի մեկնած ՀՀ քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանվածության մակարդակի բարձրացում», «2. Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու շահերը պաշտպանող օրենսդրության ամբողջացում»).

3) աղյուսակի հաջորդ` 3-րդ սյունակում նշված են տվյալ ենթաուղղությունից ակնկալվող արդյունքների ստացմանն ուղղված իրավական, վարչական և կիրառական բնույթի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կոնկրետ գործողությունները (օրինակ` վերը նշված «5.1.» ենթաուղղության շրջանակներում նախատեսվում է իրականացնել երեք կոնկրետ գործողություն` 5.1.1.- 5.1.3. համարակալմամբ, մասնավորապես, «5.1.1. Աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծություն, բացերի վերհանում», «5.1.2. Աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական բացերի ու դրանց վերացմանն ուղղված փոփոխությունների հարցի քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հետ», «5.1.3. Աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում:»).

4) հաջորդ` 4-րդ սյունակում յուրաքանչյուր գործողության դիմաց նշված է (են) այդ գործողության իրականացման համար պատասխանատու պետական կառավարման հաստատության (հաստատությունների) անվանումը (անվանումները).

5) հաջորդ` 5-րդ սյունակում նշված է տվյալ կոնկրետ գործողության կատարման ժամկետը (ծրագրով սահմանված միջոցառումներից ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են, որոնց ժամկետները հիմնականում տեղավորվում են 2012-2016 թթ. միջակայքում` բացառությամբ որոշ գործողությունների, որոնց կատարումը կարող է լինել ավելի ուշ ժամանակահատվածում).

6) վերջին` 6-րդ սյունակում նշված են յուրաքանչյուր կոնկրետ գործողության իրականացումից ստացվող քանակական արդյունքների մոնիթորինգի ցուցիչները, որոնք թույլ են տալու գնահատել յուրաքանչյուր գործողության իրականացվածությունն ու առարկայական արդյունքները:

5. ՀՀ միգրացիայի կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման գործողությունների ծրագիրը ներառում է 2012-2016 թթ. ժամանակահատվածում իրականացվելիք միջոցառումներ, որոնք կյանքի են կոչվելու իրավական, վարչական և կիրառական բնույթի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կոնկրետ գործողությունների միջոցով:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքում կկատարելագործվի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մարդասիրական նկատառումներով ՀՀ կողմից տրամադրվող պաշտպանության համակարգը, կկանոնակարգվի աշխատուժի էմիգրացիան, կկանխարգելվի անկանոն միգրացիան, կամրապնդվի երկրում փախստականների ինտեգրման գործընթացը, կապահովվի միգրացիայի քաղաքականության մշակման, համակարգման և իրականացման համար պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեությունը` դրանց մասնագիտական կարողությունների զարգացման, այդ մարմինների գործառույթների տարանջատման, դրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման, հավաստի տվյալների հավաքագրման, վերլուծության և վիճակագրության վարման միջոցով:

6. Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի նախանշված արդյունքների ապահովման գործում նշանակալի են ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 482-Ն որոշմամբ հաստատված` ՀՀ սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ապահովմանն ուղղված 2011-2015 թթ. միջոցառումների ծրագիրը, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված` «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի հայեցակարգի ու 2010-2011 թվականների միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1140-Ն որոշմամբ հաստատված` Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մարտի 15-ի ՆԿ-53-Ա կարգադրությամբ հաստատված` Հայաստանի Հանրապետության միգրացիայի համակարգի և Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրերի պահանջները, որոնք լիովին հաշվի են առնված ու ներդաշնակեցված են միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. միջոցառումների ծրագրում:

7. ՀՀ կառավարությունը Հայաստանում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի իրականացումը նախատեսում է ՀՀ կառավարության գործունեության ամենամյա միջոցառումների ծրագրում միգրացիոն քաղաքականության իրականացման 2012-2016 թթ. ծրագրի համապատասխան միջոցառումները ներառելու, իսկ դրանց շարունակականությունն ապահովող գործողությունները` ՄԺԾԾ միջոցառումների համապատասխան ծրագրում ընդգրկելու միջոցով: Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի նախանշված միջոցառումների իրականացումն ապահովել բյուջետային միջոցներով: Միգրացիոն քաղաքականության 2012-2016 թթ. ծրագրի այն գործողությունները, որոնք լրացուցիչ բյուջետային ֆինանսավորում չեն պահանջի, կներկայացվեն համապատասխան պատասխանատու պետական մարմնի աշխատակազմի ուժերով, իսկ տեխնիկական աջակցություն պահանջող գործողություններն ու միջոցառումները կիրականացվեն դոնոր երկրների ու միգրացիայի ոլորտում մասնագիտացված միջազգային կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

8. ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի պարբերական վերանայումն ու ճշգրտումը կիրականացվեն ՀՀ կառավարության կողմից` ըստ արդյունքների կատարողականի մոնիթորինգի և գնահատման (նկատված թերությունների, բացերի ու քաղված դասերի

հիման վրա):

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի ինստիտուցիոնալ պատասխանատու պետական մարմինը ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունն է: Դրա հետ մեկտեղ ծրագրի իրականացման մոնիթորինգի համակարգումն ապահովվելու նպատակով ծրագրի միջոցառումների պատասխանատու համապատասխան (շահագրգիռ) պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ կձևավորվի ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողով (ԳԾՄՄՀ):

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի ու առաջընթացի հաշվետվությունները ՀՀ կառավարություն կներկայացվեն միջոցառումների կատարման տարեկան կտրվածքով` ներկայացնելով ծրագրի իրականացումն ըստ սահմանված մոնիթորինգի ու գնահատման ցուցանիշների, երկրում միգրացիայի ոլորտում արձանագրված հիմնական զարգացումների ու տեղաշարժերի, ինչպես նաև շահագրգիռ կողմերի առաջարկությունների ու գնահատման արդյունքների:

9. ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի ամենամյա մոնիթորինգի հաշվետվության արդյունքներով, ծրագրով սահմանված նպատակադրումները, ցուցանիշները, ինչպես նաև քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները ենթակա են փոփոխության` ծրագրում համապատասխան փոփոխությունների կատարման միջոցով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2012-2016 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>Ծ Ր Ա Գ Ի Ր

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ | ԺԱՄԿԵՏ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ |
|---|---|---|---|---|---|
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՏԱՐԿՈՒՄ ԵՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏ` ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ | | | | | |
| 1.1 Միգրացիոն հարցերով ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնում և խորացում` մասնավորապես «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility and partnership) ծրագրում ընդգրկվելու. ԵՄ սահմանների կառավարման գործակալության (FRONTEX) և համապատասխան այլ կառույցների հետ կապեր հաստատելու միջոցով, ինչպես նաև օգտագործելով Արդարադատության, ազատությունների և անվտանգության հարցերով (JLS/ Հայաստան-Եվրամիություն ենթակոմիտեի ձևաչափը: | Լիարժեքորեն կօգտագործվի միգրացիոն հարցերով համագործակցություն ծավալելու ԵՄ-ի կողմից երրորդ երկրներին տրամադրվող հնարավորությունը Միգրացիոն հարցերով ՀՀ-ԵՄ համագործակցու-թյունը բարձրացել է նոր մակարդակի | 1.1.1. Միգրացիոն խնդիրներով ԵՄ-ի կողմից երրորդ երկրների հետ համագործակցությանն ուղղված առկա հնարավորությունների ու գործիքակազմի ( ԵՄ սահմանների կառավարման գործակալություն (FRONTEX), Ապաստանի աջակցության եվրոպական բյուրո (European Asylum Support Office), Սոդերկոպինգ գործընթաց (The Soderkoping Process) EUROPOLE, EUROJUST և այլն ) ցանկի նախապատրաստում: | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայությոն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Միգրացիոն խնդիրներով ԵՄ-ի կողմից երրորդ երկրների հետ համագործակցությանն ուղղված գործիքակազմերի ցանկի առկայություն |
| | | 1.1.2. Միգրացիոն հարցերով ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման և խորացման համար առկա նախադրյալների և խոչընդոտների ուսումնասիրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Միգրացիոն հարցերով ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման և խորացման մասին ուսումնասիրության հաշվետվություն |
| | | 1.1.3. Միգրացիոն հարցերով ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման և խորացման հնարավոր տարբերակների ուսումնասիրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի | 2012 | Միգրացիոն հարցերով ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնման և խորացման նախապատվելի ընտրված տարբերակներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | | |
| | | 1.1.4. ՀՀ-ԵՄ համագործակցության հաստատմանն ու խորացմանն ուղղված միջոցառումների իրականացում (FRONTEX, EUROPOLE, EUROJUST, European Asylum Support Office) | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012-2016 | Ստորագրված համագործակցության ու անդամակցության հուշագրեր ու համաձայնագրեր |
| | | 1.1.5. ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility and partnership) համատեղ հուշագրի ստորագրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | «Շարժունակության շուրջ գործընկերություն» համատեղ ստորագրված հուշագիր |
| | | 1.1.6. ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility and partnership) համատեղ հուշագրից բխող միջոցառումների իրականացում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012-2016 | «Շարժունակության շուրջ գործընկերություն» ստորագրված հուշագրից բխող միջոցառումների ծրագիր և դրա կատարման հաշվետվություն |
| 1.2. Միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի վերլուծություն ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության տեսանկյունից, և համապատասխան միջոցառումների ծրագրի մշակում: | Բարելավվել է միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտը՝ մոտեցել է ԵՄ-ում ընդունված չափանիշներին | 1.2.1. ԵՄ–ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության տեսանկյունից միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական ակտերի, ԵՄ չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ գնահատման զեկույց՝ քննարկված ԳԾՄՀ-ի կողմից |
| | | 1.2.2. Միգրացիան կանոնակարգող ԵՄ-ում ընդունված չափանիշներին ՀՀ միգրացիոն օրենսդրության համապատասխանելիության | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2013 | Միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական ակտերը ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելուն ուղղված միջոցառումների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վերաբերյալ բացերի ու դրանց լուծման միջոցառումների ծրագրի մշակում | ՀՀ սփյուռքի նախարարություն | | ծրագիր՝ քննարկված ԳԾՄՄՀ-ի կողմից |
| | | 1.2.3. Միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի և ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգի կազմակերպում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2014-2016 | Միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի և ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգի հաշվետվություններ՝ քննարկված ԳԾՄՄՀ-ի կողմից |
| 1.3. Քննարկումների ծավալում քաղաքացիական ծառայության սկզբունքով գործող պետական մարմնում օտարերկրացիներին ապաստանի, կացության և ՀՀ օրենսդրությամբ նրանց համար սահմանված իրավական այլ կարգավիճակների շնորհման գործառույթները կենտրոնացնելու շուրջ՝ նպատակ ունենալով բարձրացնելու ինչպես օտարերկրացիների հետ տարվող աշխատանքների վարչարարության, այնպես էլ վերը նշված գործառույթների համակարգման արդյունավետությունը, ապահովելու ժամանակային և նյութական ռեսուրսների ծախսման նվազեցումը: | Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների հետ տարվող աշխատանքների վարչարարության պարզեցում, արդյունավետության աճ՝ ինչպես օտարերկրացիների, այնպես էլ պետության ժամանակային և նյութական ծախսերի նվազեցում | 1.3.1. ՀՀ-ում միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների գործառութային վերլուծություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | ՀՀ-ում միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների գործառութային վերլուծության հաշվետվություն՝ քննարկված ԳԾՄՄՀ-ի կողմից |
| | | 1.3.2. Միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթների կենտրոնացման միջազգային փորձի ուսումնասիրություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթների կենտրոնացման միջազգային փորձի ուսումնասիրության հաշվետվություն |
| | | 1.3.3. քաղաքացիական ծառայության սկզբունքով գործող միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթների միջազգային լավագույն փորձի հիման վրա՝ օտարերկրացիներին ապաստանի, կացության և այլ կարգավիճակների շնորհման | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի | 2012 | Քաղաքացիական ծառայության սկզբունքով գործող միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթակազմակերպակա ն (ինստիտուցիոնալ) մոդելների վերաբերյալ հաշվետվություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կենտրոնացված գործառույթա-կազմակերպական (ինստիտուցիոնալ) մոդելների մշակում | նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | | |
| | | 1.3.4. քաղաքացիական ծառայության սկզբունքով գործող միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառութների միջազգային լավագույն փործի հիման վրա՝ օտարերկրացիներին ապաստանի, կացության և այլ կարգավիճակների շնորհման կենտրոնացված ինստիտուցիոնալ մոդելների շուրջ քննարկումների կազմակերպում և առաջարկությունների մշակում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերին նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Կենտրոնացված ինստիտուցիոնալ մոդելներից ընտրված քաղաքացիական ծառայության սկզբունքով գործող միգրացիոն քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության նախապատվելի ինստիտուցիոնալ ընտրված մոդել |
| 1.4 Վիզայի և կացության ժամկետների խախտմամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրացիներին բացահայտելու նպատակով միգրացիոն գործառույթներ իրականացնող մարմինների միջև համագործակցության մեխանիզմի մշակում:<br>Այդ մարմինների համար սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից օգտվելու պայմանների ստեղծում ու երկիր մուտք գործող ու երկրից դուրս եկող օտարերկրացիներին առնչվող տվյալների հասանելիության ապահովում: | Կբարձրանա անկանոն միգրացիայի դեմ պայքարի արդյունավետու-թյունը՝օտարերկրացու՝ ՀՀ-ում գտնվելու ամբողջ ընթացքի մասին վիզայի ու կացության ժամկետների խախտման վերաբեյալ տեղեկատվության հավաքման և պատկան մարմինների միջև փոխանակման ճանապարհով | 1.4.1. օտարերկրացիների ՀՀ կացության կարգավիճակի ու վիզայի ժամկետների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան լիազոր պետական մարմինների միջև փոխանակումը իրականացնել համապատասխան տեղեկատվական ցանցերով | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012-2016 | Օտարերկրացիների ՀՀ կացության կարգավիճակի, վիզայի ժամկետների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան լիազոր պետական մարմնի տեղեկատվական ցանցով շահագրգիռ պետական կառավարման այլ մարմիններին տրամադրման կարգը հաստատված է ՀՀ կառավարության կողմից և գործում է |
| | Կապահովվի այլ պետություններից ՀՀ, ինչպես նաև ՀՀ-ից այլ պետություններ արտաքսված անձանց, ինչպես նաև ՀՀ-ում ապաստան հայցող անձանց վերաբերյալ տվյալների մուտքագրումը ՍԷԿՏ համակարգ: Կապահովվի ՍԷԿՏ համակարգից ՀՀ ՏԿ Ն-ին ՀՀ մուտքերի և ելքերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների և վերը նշված կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տվյալների ստացման հնարավորությունը | 1.4.2. Ապահովել այլ պետություններից ՀՀ, ինչպես նաև ՀՀ-ից այլ պետություններ արտաքսված անձանց, ինչպես նաև ՀՀ-ում ապաստան հայցող անձանց վերաբերյալ տվյալների մուտքագրում ՍԷԿՏ համակարգ: Ապահովել ՍԷԿՏ համակարգից ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը Հայաստանի Հանրապետություն մուտքերի և ելքերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների և վերը նշված կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տվյալների ստացման հնարավորությունը | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2012 | Այլ պետություններից ՀՀ, ինչպես նաև ՀՀ-ից այլ պետություններ արտաքսված անձանց, ինչպես նաև ՀՀ-ում ապաստան հայցող անձանց վերաբերյալ տվյալները մուտքագրվում են ՍԷԿՏ համակարգ: ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ՀՀ մուտքերի և ելքերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների և վերը նշված կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տվյալներ է ստանում ՍԷԿՏ համակարգից |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 2.<br>ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ-<br>ՈՒՄ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ | | | | | |
| ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման ապահովման նպատակով արդեն իսկ ընդունված են մի շարք փաստաթղթեր: Առաջիկայում սպասվում է համակարգի ամբողջական ներդրումը: | | | | | |
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 3. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ`<br>ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ | | | | | |
| Հիմնախնդրի լուծմանն ուղղված միջոցառումները սահմանված են ՀՀ կառավարության 2011թ -ի ապրիլի 21-ի թիվ 482-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ապահովմանն ուղղված 2011-2015 թվականների միջոցառումների ծրագրում»: | | | | | |
| | | | | | |
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 4. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ | | | | | |
| 4.1. Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում առկա տվյալների բազաների (շտեմարանների, ռեգիստրների) ուսումնասիրության կազմակերպում, ինչպես դրանց ստեղծման և գործունեության կազմակերպման իրավա-օրենսդրական, այնպես էլ դրանցում հավաքվող տվյալների ամբողջականության տեսանկյունից, բացերի վեր հանում: | Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում առկա տվյալների բազաներում հավաքագրվող տվյալները համապատասխանում են ԵՄ չափորոշիչներին | 4.1.1. Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում առկա տվյալների բազաների (շտեմարաններ, ռեգիստրներ) ուսումնասիրություն` դրանց ստեղծման և գործունեության կազմակերպման իրավական, օրենսդրական, ինչպես նաև դրանցում հավաքվող տվյալները ԵՄ չափանիշներին համապատասխանության տեսանկյունից | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ, մեթոդաբանական օժանդակության մասով, իսկ հետազոտությունների իրագործումը` «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան)<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն | 2012-2013 | Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում առկա տվյալների բազաների (շտեմարաններ, ռեգիստրներ) ուսումնասիրության հաշվետվություն` քննարկված ԳԾՄՀ-ի կողմից |
| | | 4.1.2. Միգրացիայի ոլորտի պետական մարմինների տեղեկատվական բազաներում հավաքագրվող տվյալների վերլուծության իրականացում, դրանց հասկացությունների համապատասխանության համադրում ԵՄ օրենսդրության (aquis) դրույթներին ու բացերի վեր հանում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ, մեթոդաբանական օժանդակության մասով, իսկ հետազոտությունների իրագործումը` «Պետական | 2012-2013 | ՀՀ միգրացիայի ոլորտի տեղեկատվական բազաների ու տվյալների վերլուծության, հասկացությունների ամբողջականության համապատասխանության վերաբերյալ հաշվետվություն` քննարկված ԳԾՄՀ-ի կողմից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան)<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն | | |
| | | 4.1.3. Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում տեղեկատվական բազաների (ռեգիստրների) ստեղծմանն ու համալրմանը ուղղված առաջարկությունների մշակում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ, մեթոդաբանական օժանդակության մասով, իսկ հետազոտությունների իրագործումը՝ «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան)<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն | 2013-2014 | Միգրացիայի ոլորտի գործող տեղեկատվական ռեգիստրների, բազաների ստեղծմանն ու համալրմանը ուղղված առաջարկությունների փաթեթ՝ քննարկված ԳԾՄՀ-ի կողմից |
| 4.2. Միգրացիայի բնագավառում վիճակագրական ցուցանիշների համակարգի ձևավորում՝ ԵՄ-ում ընդունված ցուցանիշներին համաձայն | Ձևավորված է միգրացիոն ոլորտում վիճակագրական ցուցանիշների համակարգ Հայաստանում ներդրված ցուցանիշների համակարգը համահունչ է ԵՄ-ում ընդունված ցուցանիշներին | 4.2.1. Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների համակարգի մշակում և ներդրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2013 | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում ներդրված է միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների գերատեսչական համակարգ |
| | | 4.2.2. Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների հրապարակում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | 2013 | Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ ստացված վիճակագրական ցուցանիշները ներառված և հրապարակված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տեղեկատվական զեկույցում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4.2.3. ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում` երկքաղաքացիների) վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների համակարգի մշակում և ներդրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2014-2015 | ՀՀ ոստիկանությունում ներդրված է ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում` երկքաղաքացիների) վերաբերյալ ցուցանիշների գերատեսչական համակարգ |
| | | 4.2.4. ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում` երկքաղաքացիների) վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների հրապարակում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | 2015-2016 | ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիություն ձեռքբերած օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում` երկքաղաքացիների) վերաբերյալ ստացված վիճակագրական ցուցանիշները ներառված և հրապարակված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տեղեկատվական զեկույցում |
| 4.3. Այլընտրանքային այլ աղբյուրներից միգրացիայի առնչվող տեղեկատվության ստացման մեխանիզմների մշակում, այդ թվում 2-3 տարի պարբերականությամբ միգրացիոն հոսքերի ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունների իրականացում: | Միգրացիոն հոսքերի վերաբերյալ հրապարակված ազգային զեկույցներ, իրականացված ընտրանքային հետազոտություններ | 4.3.1. Միգրացիոն հոսքերի ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունների իրականացում միջոցառման ներառում ՄԺԾԾ եռամյա ծրագրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ, մեթոդաբանական օժանդակության մասով, իսկ հետազոտությունների իրագործումը` «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան)<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2012-2013 | Միգրացիոն հոսքերի ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունների իրականացման հաստատված մեթոդոլոգիա |
| | | 4.3.2. Միգրացիոն իրավիճակի վերաբերյալ տարեգրքերի պատրաստում և հրատարակում | ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ, մեթոդաբանական | 2015-2016 | Յուրաքանչյուր տարի հրատարակվում է միգրացիոն իրավիճակի վերաբերյալ տարեգիրք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օժանդակության մասով, իսկ հետազոտությունների իրագործումը` «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան)<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | | 4.3.3. *(ենթակետն ուժը կորցրել է 16.05.13 N 510-Ն)* | | | |
| **ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 5. ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | | | | | |
| 5.1. Արտագնա աշխատանքի մեկնման գործընթացում ծագող իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորում` նպատակ ունենալով պաշտպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու շահերը: | - Արտագնա աշխատանքի մեկնած ՀՀ քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանվածության մակարդակի բարձրացում<br>- Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու շահերը պաշտպանող օրենսդրության ամբողջացում | 5.1.1. Աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծություն, բացերի վերհանում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2012 | Օրենսդրական դաշտի վերլուծության հիման վրա վեր հանված բացեր, դրանց վերացմանն ուղղված առաջարկներ` քննարկված ԳԾՄՍՀ-ի կողմից |
| | | 5.1.2. Աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական բացերի ու դրանց վերացմանն ուղղված փոփոխությունների հարցի քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների հետ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2012 | - Քննարկմանը մասնակցած պետական մարմինների ու ՀԿ-ների թիվը,<br>- Օրենսդրության փոփոխությանն ուղղված առաջարկների թիվը |
